

### ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մովսէս Կաթողիկոսի մահուան 300ամեայ տարեդարձը 1933ին առիթ ընծայած էր ինձ ձեռնարկելու աշխատութեանս :

Աշխատած եմ երեսան բերել հատորիս մէջ Մեծ Կաթողիկոսին անձն եւ գործունէութիւնն այնպէս, ինչպէս տեսած, ըմբռնած եւ ներկայացուցած են զանիկա ժամանակակիցները : Անոնք առիթն չեն փախցուցած փառաբանելու դարուն մարդը հիացախտուն խօսքերով եւ երախտագիտական ցոյցերով . այդ արտայայտութիւնները ժամանակին թելադրութիւններն են, անոնք անկեղծութիւն կը բուրեն . եւ մենք կրնանք վստահաբար հաւատք ընծայել անոնց : Այս պատճառաւ ալ ընդարձակ տեղ տուած եմ աշխատութեանս մէջ ժամանակիցներու վկայութեանց՝ յիշատակարաններու եւ վաւերագիրներու մէջ :

Կարեւոր համարեցայ նաեւ, Կաթողիկոսին արդիւնքն առաւել կշռով գնահատելու համար, նկարագրել միջավայրն եւ ժամանակն աւելի եկեղեցական-պատմական քան քաղաքական-տնտեսական տեսակէտէ :

Երբ լոյս կը տեսնէր աշխատութիւնս